ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/07-10086 «30» 05 2019թ.

«Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության
տնօրեն Ա. Խաչատրյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևան համայնքի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լոկատոր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 31.01.2017թ. կնքված հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռք բերման N «ԵՔ-ԲԸԱՀԾՁԲ-17/33» պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 2.4 կետի 2.4.1 ենթակետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ.

Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.5 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Պայմանագրի N 1 հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է ապահովել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների այնպիսի կառավարում, որով կբարելավվեն նշված ընկերության 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ֆինանսական ցուցանիշները:

Ոչ արդյունավետ կառավարմամբ ֆինանսական ցուցանիշների վատթարացումը, ինչպես նաև տեղական վճարի հավաքագրման տարեկան նվազագույն շեմից՝ 1200000000 (մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, պակաս գումար Երևանի համայնքի բյուջե մուտքագրված լինելու հանգամանքը կհամարվի Ծառայությունների մատուցման պարտավորության թերի կատարում, ինչը հիմք կհանդիսանա Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման համար:

2018 թվականի ընթացքում Երևան համայնքի բյուջե մուտքագրվել է 1.053.024.260 դրամ (879.264.410 դրամ՝ ավտոկայանատեղի վճար, 173.759.850 դրամ տուգանքի գումար), այսինքն՝ 146.975.740 դրամ պակաս գումար:

Երևանի քաղաքապետին 14.02.2019թ. հասցեագրված Ձեր դիմումով, որպես պայմանագրով և դրա հիման վրա կնքված համաձայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար պատասխանատվությունից

ազատման հիմք նշել եք պայմանագրի 6.1-ին կետի դրույթներն առ այն, որ Կատարողի կողմից իր պայմանագրային պարտավորություններն ոչ ամբողջական կատարելը եղել է անհաղթահարելի ուժի հետևանք, մասնավորապես քաղաքական հուզումները, որոնք, ըստ Ձեզ, տևել են 2018թ. ապրիլ ամսից մինչև 2018թ. օգոստոս ամիսը ներառյալ:

Ձեր դիմումով նշված՝ պայմանագրային պարտավորությունները մասնակիորեն չկատարելու համար պատասխանատվությունից ազատելու հիմնավորումները (հանգամանքները) անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ, հայտնի փաստ է, որ քաղաքական հուզումները տևել են 2018թ. ապրիլ ամսվա կեսերից մինչև մայիս ամսվա առաջին 8 օրը:

Երկրորդ, 2018 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ավտոկայանատեղի վճարի գծով Երևան համայնքի բյուջե մուտքագրվել է 46.128.200 դրամ, իսկ մայիս ամսվա ընթացքում՝ 39.369.200 դրամ: Համեմատության կարգով տեղեկացնում եմ, որ 2017 թվականի ապրիլ ամսվա ընթացքում նշված վճարի գծով Երևան համայնքի բյուջե է մուտքագրվել 22.382.900 դրամ, իսկ մայիս ամսվան՝ 45.386.200 դրամ:

Ակնհայտ է, որ 2018թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ավտոկայանատեղի վճարի գծով հավաքագրված գումարն անհամեմատ ավելի մեծ է, քան 2017 թվականի նույն ժամանակահատվածի համար:

Երրորդ, հայտնի իրադարձությունները հիմնականում տեղի են ունեցել Երևանի Կենտրոն վարչական շրջանում և ընկերությունը զրկված չի եղել այլ վարչական շրջաններում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում կայանած և տեղական վճարը չվճարած անձանց վերաբերյալ շրջիկ մեքենաների միջոցով կազմված նյութերը ներկայացնել Երևանի քաղաքապետարան: Ինչպես նշել ենք, հայտնի իրադարձությունները տեղի են ունեցել 2018 թվականի ապրիլի կեսերից մինչև մայիսի 9-ը ընկած ժամանակահատվածում, իսկ տուգանքի գծով առավելագույն գումարը՝ 28.389.900 դրամի չափով, Երևանի բյուջե մուտքագրվել է 2017 թվականի հունիս ամսվա ընթացքում:

Ակնհայտ է, որ անգամ 2018 թվականի ապրիլի կեսերից մինչև մայիսի 9-ը ընկած ժամանակահատվածում շրջիկ մեքենաների միջոցով իրավախախտման փաստերի վերաբերյալ կազմված նյութերը տրամադրվեին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին, ապա դրանց հիման վրա ընդունված որոշումներով չէր կարող գանձվել և ապահովվել պակաս գումար հանդիսացող 146.975.740 դրամը:

Ուստի, Կատարողի կողմից խախտվել են պայմանագրի 2.4 կետի 2.4.1 ենթակետով և N 1 հավելվածի 2-րդ կետով նախատեսված պարտավորությունները, ինչը հիմք է հանդիսանում Պատվիրատուի համար միակողմանի լուծել պայմանագիրը (հրաժարվել պայմանագրից):

Սույն ծանուցումն ուղարկվում է Պայմանագրի 7.6 կետով նախատեսված կարգավորումների համաձայն:

Համաձայն պայմանագրի 7.7 կետի՝ պայմանագիրը դադարելիս (լուծվելիս) Կատարողը պարտավոր է վերադարձնել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության գույքը Պատվիրատուին ոչ ուշ քան Պայմանագիրը դադարելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Ուստի, սույն ծանուցումը www.gnumner.am կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից պայմանագիրը համարվում է լուծված և այդ պահից սկսած է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է կատարել պայմանագրի 7.7 կետով նախատեսված պարտավորությունը:

Հ. Մարության